Ասաց. «Դիւ շատ զօրեղ իս, խօսացիր, քեռ բերնի հէլըմ [1]) ես առայ, ըդուց տղով էլայ։

Թագաւորի խելք ինկաւ։ Ինը ամիս որ Թամամից, Աստուածուքիւն խաչապաշտ Թագաւորի աղջկան էրկու տղայ տուից. վարդապիտ Թոնդրան վրայ կնքից, Թագաւոր չ'ակխաւ, մէկի անուն դրից Սանասար մէկին՝ Բաղդասար։ Որ գեղական տղէք ամսական կ'ճոչանան, ընդունք օրական. Աստծու կամեցածն էր։

Շատ քիչ Աստուած գիտէ, մէ քանի տարի վրէն ընցաւ, խե [2]) լսողաց, չար թշնամին մտաւ ընդունց կռքերի միջին, մատաղ ուզիցին։

Կռքապետ իրէ Թագաւորի մօտ. «Կռքիր մատաղ կ'ուզին»։

Ասաց. «Ինչ կուզէք՝ տարէք մատաղ արէք»։

«Խաչապաշտ Թագաւորի աղջըկից էրկու տղայ կայ, էնոնք մատաղ կ'ուզին, յիւրիշ բան չեն ուզէ»։

Թագաւոր ասաց. «Տարէք, մատաղ արէք»։

Էդ տղերք արիւ-լիւս չին տիսած։ Մունանթ արիցին Թագաւորին. «Գնանք աշխար տեսնինք, մենք մօրից ծնուիր ինք՝ աշխար չինք տեսիր»։

Ասաց. «Ճան լակոտներ, գնացէք»։

Գնացին ծովի կրաղ. Սանասար մեծ աղբէրն էր, Բաղդասար պստի աղբէր. Սանասար Բաղդասարին ասաց. «Մինք մէ թալինք ջիւր՝ աղէկ ի, քան ի էրթանք, կռապաշտ Թագաւոր մէ կ'մատղի կուռքերու յառաջ»։

Բաղդասար սիրտ չ'արեց։ Սանասար ինք քցից ծով։ Աստծու հրամանով ծով ինչ չոր գետին վրայ գնաց, ծով բացուից. գնաց մէ բաղչի միջին, տեսաւ մէ ձի էնդի զինած, կէծական թուր վրէն կախ տուած։ Սիրտ էրաւ, որ ձին խեծնէր, ձին ասաց. «Խոզածին, ի՞նչ կ'էնես, քեռ միտ ի՞նչ ի»։

---

[1]) Շունչ։ [2]) Հեռի։